ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

27 ապրիլի 2015թ. թիվ 251-Ն

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1169-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կանոնադրության 14-րդ կետի 4-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների ընտրանքային գնահատման և գնումների վերաբերյալ տվյալների վերլուծության և էլեկտրոնային տեղեկատուի վարման կարգերը հաստատելու մասին» N 1169-Ն հրամանի N 1 հավելվածով հաստատված կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կարգի 3-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում <<յուրաքանչյուր 10-րդ շրջանակային համաձայնագրերով>> բառերը փոխարինել <<յուրաքանչյուր 7-րդ շրջանակային համաձայնագրերով>> բառերով,

բ. 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<2) գնահատվում է պետական կառավարման մարմին և պետական հիմնարկ հանդիսացող պատվիրատուների կողմից հայտարարված յուրաքանչյուր 5-րդ պարզեցված և յուրաքանչյուր 5-րդ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված ընթացակարգերը՝ դրանք www.gnumner.am կայքում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում,>>,

գ. 3-րդ ենթակետում <<օրվա ընթացքում>> բառերից հետո լրացնել <<և յուրաքանչյուր 7-րդ շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգերը՝ դրանք www.gnumner.am կայքում հրապարակվելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ ավիասպասարկման ծառայությունների գնման,>> բառերը,

դ. 4-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<4) գնահատվում է պետական կառավարման մարմին և պետական հիմնարկ չհանդիսացող պատվիրատուների կողմից հայտարարված յուրաքանչյուր 7-րդ պարզեցված և յուրաքանչյուր 7-րդ <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված ընթացակարգերը՝ դրանք www.gnumner.am կայքում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում,>>,

2) Ուժը կորցրած ճանաչել Կարգի 4-րդ կետը,

3) Կարգի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

<<5. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված գնահատման արդյունքներով Կենտրոնը՝

1) պետության համար պարտավորություններ առաջացնող գործարքի դեպքում www.gnumner.am կայքում սույն կարգով սահմանված գնահատումն իրականացնելու օրը դրա արդյունքներով հրապարակում է գնահատման մասին դրական կամ բացասական եզրակացություն՝ նշելով հրապարակման ամսաթիվը.

2) պետության համար պարտավորություններ չառաջացնող գործարքի դեպքում սույն կարգով սահմանված գնահատումն իրականացնելու օրը բացասական եզրակացությունը ուղարկում է պատվիրատուին, իսկ ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը www.gnumner.am կայքում հրապարակում է ամփոփ տեղեկատվություն՝ նշելով սույն կարգի համաձայն գնահատված գնման գործարքի ծածկագիրը, պատվիրատուի անվանումը, եզրակացությունը՝ դրական կամ բացասական, բացասական եզրակացության դեպքում՝ վերջինիս բովանդակությունը, բացասական եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ պատվիրատուից ստացված պարզաբանումները և այդ պարզաբանումները ընդունելու կամ չընդունելու մասին Կենտրոնի եզրակացությունը:>>,

4) Կարգը լրացնել նոր 6-10-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<6. Բացասական եզրակացությունը հրապարակվելու կամ պատվիրատուին ուղարկելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն գրավոր Կենտրոնին է ներկայացնում պարզաբանումներ բացասական եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին:

7. Կենտրոնը պատվիրատուի պարզաբանումը ստանալուն հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում և ընդունում է այն, եթե՝

1) պատվիրատուն գնումների մասին ՀՀ օրենսդրության հիման վրա հիմնավորում է անհամապատասխանության արձանագրման անճշտությունը.

2) անհամապատասխանությունը վերաբերում է գնման գործընթացի կազմակերպման կարգին և պատվիրատուն շտկել է այն.

3) պատվիրատուն համաձայնում է անհամապատասխանությանը և հավաստում, որ տեղ գտած անհամապատասխանությունը չի հանգեցնի գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը:

8. Ներկայացված պարզաբանման քննարկման արդյունքների մասին Կենտրոնը սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում՝

1) պետության համար պարտավորություններ առաջացնող գործարքի դեպքում www.gnumner.am ինտերնետային կայքում հրապարակում է ինչպես պատվիրատուի ներկայացրած պարզաբանումը՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակով, այնպես էլ Կենտրոնի եզրակացությունը՝ նշելով հրապարակման ամսաթիվը,

2) պետական ոչ առևտրային և պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կարիքների համար կատարվող գնման գործարքների դեպքում վերջիններիս և դրանց ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմին է ուղարկում պատվիրատուների ներկայացրած պարզաբանումները՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակով և այդ պարզաբանումների վերաբերյալ Կենտրոնի եզրակացությունը.,

3) համայնքների կարիքների համար կատարվող գնման գործարքների դեպքում վերջիններիս և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ուղարկում պատվիրատուների ներկայացրած պարզաբանումները՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակով և այդ պարզաբանումների վերաբերյալ Կենտրոնի եզրակացությունը,

4) համայնքային ոչ առևտրային և համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կարիքների համար կատարվող գնման գործարքների դեպքում վերջիններիս և դրանց ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմին է ուղարկում նշված պատվիրատուների ներկայացրած պարզաբանումները՝ բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակով և այդ պարզաբանումների վերաբերյալ Կենտրոնի եզրակացությունը,

9. Պետության համար պարտավորություններ առաջացնող գործարքների մասով պատվիրատուի ներկայացրած պարզաբանումը Կենտրոնի կողմից չընդունելու դեպքում պատվիրատուն կարող է հարցը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը, որի ընդունած որոշումը ՀՀ ֆինանսների նախարարության և Կենտրոնի համար վերջնական է:

10. Պետության համար պարտավորություններ առաջացնող գործարքների դեպքում պատվիրատուի կողմից Կենտրոնի բացասական եզրակացության վերաբերյալ պարզաբանումներ չներկայացնելը կամ ներկայացված պարզաբանումը Կենտրոնի կողմից չընդունելը հանգեցնում են տվյալ գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրի ֆինանսավորման կասեցմանը՝ մինչև ընդունելի պարզաբանումը ներկայացնելը կամ ՀՀ կառավարության կողմից համապատասխան որոշում ընդունելը:>>:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Գ. Խաչատրյան